Հասցեատեր՝

«Ալաշկերտ ՖԱ» ՀԿ

Էլեկտրոնային փոստի հասցե՝ info@fcalashkert.am

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպության

Կարգապահական և էթիկայի կոմիտեի

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

03.10.2023թ.

Նախագահ	Կարեն Հովհաննիսյան
Անդամներ	Նարեկ Ադամյան
	Դավիթ Բակլաչյան

Վարույթ՝	ԱԽ-059
Խախտում՝	1. «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստ Կուբի Ֆաբրիկ Մոնդեսիրեի (33544)՝ մրցակցի հետ վիճաբանություն անելը (Հավելված 1 Բ, 17-րդ կետ) 2. «Ալաշկերտ-2» թիմի ադմինիստրատոր Աղվան Մկրտչյանի մրցակից թիմի պաշտոնյայի հետ վիճաբանություն անելը (Հավելված 1 Ա, 31-րդ կետ)
Առաջնություն՝	2023-2024 Հայաստանի Առաջին Խումբ
Խաղ՝	«Գանձասար» - «Ալաշկերտ-2», 26.09.2023թ. (3:1)

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեն որոշեց՝

1. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետով՝ «Ալաշկերտ-2» թիմի ֆուտբոլիստ Կուբի Ֆաբրիկ Մոնդեսիրեի (33544)՝ մրցակցի հետ վիճաբանություն անելու համար վերջինիս որակազրկել (2) երկու խաղով և «Ալաշկերտ ՖԱ» ՀԿ-ին տուգանել նվազագույն աշխատավարձի հիսունապատիկի՝ 50,000 ՀՀ դրամի չափով: Որակազրկումը տարածվում է 2023 թվականի սեպտեմբերի 26-ից սկսած և ներառում է արդեն իսկ բաց թողնված խաղ(եր)ը (այդպիսիք լինելու դեպքում):
2. Առաջնորդվելով ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կանոնակարգի (2023 թվականի խմբագրություն) 19-րդ հոդվածի 4-րդ կետով և 26-րդ հոդվածով՝ հրահանգել «Գանձասար ՖԱ» ՀԿ-ին այլևս բացառել 2-րդ կետով մատնանշված համանման դեպքերը, մասնավորապես բացառել ակումբի ֆուտբոլային սուբյեկտների կողմից ոչ

սպորտային վարքագծի դրսևորումները: Հրահանգի կատարումը չապահովելու պարագայում այլևս կիրառել ավելի խիստ պատասխանատվության միջոցներ:

ՀՖՖ Կարգապահական և էթիկայի կոմիտեի նախագահ՝

Կարեն Հովհաննիսյան

Ծանուցում

- ՀՖՖ կարգապահական և էթիկայի կոմիտեի որոշումների բողոքարկման համար որոշմամբ պատասխանատվության միջոցի ենթարկված ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման վերաբերյալ գրավոր հայտարարություն ներկայացնի Կարգապահական գրասենյակ (legal@ffa.am էլեկտրոնային հասցեով)՝ ի գիտություն Բողոքարկման կոմիտեին, համապատասխան որոշման մասին ծանուցվելուց հետո 3 (երեք) օրվա ընթացքում:
- Որոշմամբ հիմքերի տրամադրման համար համապատասխան Ֆուտբոլային սուբյեկտը պետք է բողոքարկման հայտարարություն ներկայացնելու հետ միասին ներկայացնի որոշման հիմքերը պատվիրելու համար նախատեսված 100.000 ՀՀ դրամի չափով տուրքի վճարումը հավաստող ապացույց: Նշված վճարը վերադարձման ենթակա չէ:
- Բողոքարկման հայտարարությունը ներկայացնելուց հետո 5 (հինգ) օրվա ընթացքում (այն դեպքում, երբ Ֆուտբոլային սուբյեկտը դիմել է որոշման հիմքերը ստանալու խնդրանքով՝ բողոքարկման 5-օրյա ժամկետը սկսում է հաշվարկվել այդ հիմքերը ստանալու պահից) Ֆուտբոլային սուբյեկտը նույն կարգով պետք է ներկայացնի հիմնավորված բողոքը, ինչպես նաև բողոքի ներկայացման համար նախատեսված համապատասխան տուրքը վճարելու վերաբերյալ ապացույցը: Բողոքարկման վճարը կազմում է 100,000 ՀՀ դրամ և ենթակա է վերադարձման յուրաքանչյուր դեպքում ԲԿ որոշմամբ սահմանված չափով՝ ըստ բավարարված պահանջների համամասնության:
- Նշված ժամկետներում բողոքարկման գրավոր հայտարարություն չներկայացնելը հանգեցնում է որոշման վերջնական և պարտադիր դառնալուն, և համարվում է, որ կողմը հրաժարվել է բողոք ներկայացնելու իր իրավունքից: